

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ թանգարանագիտության,
գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՏԴ 27-726.1:94:655

ՄԵՍՐՈՂ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՆՇԱՆՅԱՆ

Բանալի բառեր և արտահայտություններ. Հայկական սփյուռք, Սրբոց
Հակոբյանց վանք, մշակույթ, ձեռագրեր, գրքի թարգմանություն, տպարան:

Ключевые слова и выражения: Армянская Диаспора, монастырь Св.
Иакова, культура манускрипты, перевод книги, издательство.

Key words and expressions: Armenian Diaspora, Monastery of St. James,
culture, manuscripts, the translation of the book, book-printing.

Երուսաղեմի հայ գաղթավայրը արևմտահայ մշակույթի ամենախոշոր
կենտրոններից է, քանի որ համազգային ընդգրկումով և ներգործությամբ
խթանել է ոչ միայն Իսրայելի հայ գաղթօջախների, այլև բուն Հայաստանի
ազգային, կրոնական, լուսավորական և մշակութային կյանքը: Երուսաղեմի
գաղթօջախի կարևորությունը հայության մեջ ամրապնդվում է նրա
պատրիարքության՝ Հայ Եկեղեցու հոգևոր կենտրոնների մեջ զբաղեցրած
յուրահատուկ և բարձր հեղինակությամբ: Մեզ հասած պատմական
հավաստի նյութերի հիման վրա կարելի է փաստել, որ Երուսաղեմում
հայկական սրբավայրեր գոյություն են ունեցել դեռևս Դ. Դարի վերջին և Ե.
Դարասկզբին¹: Երուսաղեմի հայոց պատրիարքության փառքն ու
պարծանքն է Սիոն լեռան վրա գտնվող Ս. Հակոբյանց վանքը, որը, ըստ
ավանդության, հիմնվել է առաջին դարում:

Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում 1832 թ. Հիմնվել է հայկական
տպարան, որը մինչ օրս շարունակում է իր գործունեությունը՝ հակառակ
բազմաթիվ վտանգների և դժվարությունների: Ս. Հակոբյանց միաբանության
ծավալած հոգևոր-կրթական, մշակութային, հրատարակչական, գրական,
թարգմանական գործունեությանը, ի թիվս բազմաթիվ ականավոր
գործիչների, իր նպաստն է բերել նաև Մեսրոպ արքեպ. Նշանյանը²: Նա

¹ Տե՛ս «Անաստաս Վարդապետի Վասն Վանօրէից որ ի Ս. Քաղաքն Յերուսաղեմ ըստ
նախնեաց մերոց գաղղիարէն թարգմանութեան», Վենետիկ, 1866, էջ 40:

² Մեսրոպ արքեպ. Նշանյանը ծնվել է 1872 թվականին: 1887-1891 թթ. եղել է
Ժառանգավորաց վարժարանի աշակերտ, 1889-1906 թթ.՝ Ս. Հակոբյանց վանքի
հաշվակալ և գանձապետ, 1906-ին՝ մատենադարանապետ, 1911-1929 թթ.՝

կարևոր պաշտոններ է վարել կրթական և վարչական ոլորտներում: Մեսրոպ արք. Նշանյանն իր պատանեկությունն անցկացրել է Ս.Հակոբյանց վանքում, երբ այնտեղ իրենց գործունեությունն էին ծավալել Աստվածատուր Հովհաննիսյան, Տրդատ Պալյան և Սահակ Խապայան միաբան վարդապետները: 1891-1895 թթ. Եղել է ձեռագրատան տեսուչ: Հետագայում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում լույս է տեսնում վանքի գանձատանը պահվող ձեռագրերի մի ցուցակ, որը կազմել էր Մեսրոպ վարդապետ Նշանյանը³:

Մինչև 1913 թ. Նշանյանը «չարտահայտվեց հրապարակավ», սակայն ապագան ցույց տվեց, որ լռության մեջ էլ նա մեղվաջան աշխատասիրող էր. Ուսումնասիրում էր Մատենադարանի ու Դիվանի փաստաթղթերը, նյութեր էր հավաքում ԺԷ.-ԺԹ. Դդ. Հայոց քաղաքական և եկեղեցական պատմության վերաբերյալ, հրատարակության էր պատրաստում պատմական ամբողջական գործեր: 1915-ին լույս է ընծայում «Ժամանա կազմութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ» «ընտիր հրատա րակությունը»՝ առաջաբանով, հավելվածներով (Երուսաղեմ, 1915, 667 էջ), որի մասին հիացմունքով և երախտագիտությամբ են արտահայտվել ժամանակի մամուլում⁴: Գրքի տպագրության ծախսերը հոգացել էր Սուքիաս արքեպ. Պարզյանը, որը նաև այլ կարևոր գործերի մեկենաս էր: 1939 թ. Մեսրոպ Նշանյանը Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում հրատարակում է Երեմիա Չելեպի Քյումուրճյանի «Օրագրութիւնը» հավելվածով՝ ա. Թղթեր, բ. Ուղերձներ, գ. Գանձեր և ողբեր (ՃԽԴ., 715 էջ): Բնագիրը հայերեն և հայատառ թուրքերեն է. Գիրքը տպագրվել է «Դուրյան Մատենադարան» մատենաշարով (թ. 13): Վերոնշյալ երկասիրությունները հիացնում են ընթերցողին. Դրանցում Մեսրոպ արք. Նշանյանը հանդես է գալիս որպես խորագետ բանասեր և պատմագետ:

Դեռ տպագրության է սպասում մեկ այլ հավաքածու՝ «Կոնդակներ և Նամակներ»-ը՝ Սրբոց Հակոբյանց կաթողիկոսական, պատրիարքական

դպրոցների տեսուչ, 1913-1929-ին՝ տպարանի տեսուչ, 1907-08 թթ.՝ վարչական ժողովի անդամ, 1907-08 և 1921 թվականներին՝ Տնօրեն ժողովի անդամ, 1922-ին ընտրվել է լուսարարապետ և այդ պաշտոնը վարել մինչև 1929 թվականը. տե՛ս Ս. Աղանունի, Միաբանք և այցելուք Հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 280-281:

³ Խոսքը 130 ձեռագրերի մասին է. տե՛ս «Ցուցակ Ս. Յակոբի Գանձատան մեջ պահուած ձեռագրաց», կազմեց Մեսրոպ վրդ. Նշանեան (3 սեպտ. 1907), հրատարակեց Հայրիկ արքեպ. Ասլանեան՝ Ս. Աթոռի լուսարարապետ (16 փետրվարի 1965), 16 թերթ:

⁴ Տե՛ս Հ. Ն. Ա., Մահուան հունձքը հայագիտական ասպարեզի վրայ, գրախոսական. «Հանդես ամսօրեայ», 1947, թ. 12, էջ 641-643:

կոնդակների, եկեղեցական ու աշխարհիկ հայտնի ազգային գործիչների բազմաթիվ թղթակցությունների վերջին չորս դարերի դիվանը: Անտիպ է նաև Մեսրոպ արք. Նշանյանի թարգմանած «Երուսաղեմ. Հրնթացս դարուց» աշխատությունը⁵: Նա ֆրանսերենից թարգմանել է մի շարք «գեղեցիկ» պատմվածքներ, որոնք «Հայաստանի Կոչնակ»-ում հրատարակվելուց հետո առանձին գրքով լույս են տեսել 1932 թ.» «Հատընտիր պատմվածքներ» վերնագրով: Մեսրոպ արք. Նշանյանը հայերեն է թարգմանել Սուրբ Գրքի «ուսման վերաբերյալ» բազմաթիվ հոդվածներ, որոնք տպագրվել են «Միոն» ամսագրում⁶: Կազմել Երուսաղեմի 1926-1943 թթ. «Օրացույցներ»-ն՝ ըստ հին տոմարի: Նրա գրական և բանասիրական հոդվածները տպագրվել են «Տարեցույցներ»-ում և զանազան լրագրերում⁷:

1933 թ. Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում լույս է տեսնում Մեսրոպ արք. Նշանյանի «Տպարան առաքելական աթոռոյն Սրբոց Յակոբեանց Երուսաղեմի. Հարիւրամեայ յոբելեանի առթիւ (1833-1933 թթ.)» գրքույկը, ուր շարադրված են տպարանի ստեղծման վերաբերյալ որոշ մանրամասներ, տրված է Երուսաղեմի տպագիր հայ գրքի փոքրիկ ցանկը, որն ընդգրկում է 1833-1933 թվականները: Այս աշխատության մեջ առաջին անգամ նա ներկայացրել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի տպարանի 1833-1933 թթ. Գործունեության պատմական համառոտ ուրվագիծը⁸: Մեսրոպ արք. Նշանյանի այս աշխատությունը եղել է տպարանի

⁵ Տե՛ս անդ, էջ 642-643:

⁶ Տե՛ս «Կենսագրական գիծեր Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանի», խմբագրական. «Հասկ», 1939, մայիս, էջ 68:

⁷ Տե՛ս Մ. Աղաւնունի, Միաբանք և այցելութ Հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 280-281:

⁸ Մեսրոպ Աղավնունին, Ավետիս Սանջյանը և Մեսրոպ Նշանյանն իրենց աշխատություններում նշում են, որ 1914 թվականին Երուսաղեմի Ս. Հակոբյանց տպարանում լույս է տեսել Մեսրոպ արք. Նշանյանի 110 էջանոց «Ակնարկ մը Երուսաղեմի Ս. Յակովբեանց տպարանին վրայ» գիրքը: Այս գրքի մասին նշված է միայն մատենագիտական աղբյուրներում, իսկ գիրքն ինքներս չենք տեսել, քանի որ բացակայում է Հայաստանի Հանրապետության գրադարաններում: Մկրտիչ Աղավնունին նշում է, որ Մեսրոպ արք. Նշանյանը հայկական տպագրության 400 ամյակի առթիվ վանքի 1914-ի օրացույցին կցել է «Ակնարկ մը Երուսաղեմի Ս. Յակովբեանց տպարանին վրայ» վերնագրով պատմական մի հոդված, նույն տպարանում հրատարակած գրքերի ցուցակ. գուցե սա վերոնշյալ գիրքն է (տե՛ս Մ. Աղաւնունի, Միաբանք և այցելութ Հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 280-281):

գործունեությամբ զբաղվող հետազոտողին տեղեկություններ հաղորդող միակ աղբյուրը⁹:

Ազգային մեծանուն բարերար Պողոս Նուբար Փաշան, Մաղաքիա արք. Օրմանյանի «Ազգապատում»-ի երրորդ մասի տպագրությանն օժանդակելուց հետո (Երուսաղեմ, 1927), Բաբկեն եպս. Կյուլեսերյանի միջնորդությամբ հոգում է նաև Սրբոց Հակոբյանց միաբանության ժառանգավորաց վարժարանի նշանավոր ուսուցիչ, տպարանի տեսուչ, «Սիոն» ամսագրի առաջին խմբագիր, ժամանակի հայտնի մտավորական Տիգրան Սավալանյանի գրաբար երկհատոր «Պատմություն Երուսաղեմի» մեծարժեք աշխատության տպագրության ծախսը (Երուսաղեմ, 1931)¹⁰: Գիրքը պետք է հանձնվեր տպագրության, սակայն Սուրբ Սթոքի գահակալ Եղիշե Դուրյան պատրիարքը մտածելով, որ գրքի գրաբար հրատարակությունը մատչելի կլինի միայն սակավաթիվ ընթերցողների համար, ցանկացավ այն աշխարհաբարի վերածել, ուստի թարգմանությունը հանձնարարեց Մեսրոպ արք. Նշանյանին: Գրքի ձեռագիրը բաղկացած է շղագիր ԾԵ.+1517 էջից, գրված է հեղինակի ձեռքով և կրում է Սուրբ Սթոքի ձեռագրերի մատենադարանի 2013 կարգաթիվը: Եղիշե Դուրյանը աչքի է անցկացրել գրքի փորձ նական օրինակը և մինչև 928 էջը տեղ-տեղ ուղղումներ արել: Նրա անակնկալ վախ ճանից հետո նույն գործը՝ մինչև 1088 էջը շարունակել է Բաբկեն Կյուլեսերյանը:

Մեսրոպ արք. Նշանյանը «Թարգմանողի զեկոյց»-ի մեջ նշում է, որ ինքը՝ Եղիշե պատրիարք Դուրյանի օրհնությամբ քաջալերված, ձեռնարկել է գրքի թարգմանությունը¹¹: Թարգմանիչը գրքի բնագիրն աշխարհաբարի է վերածել՝ հոգ տանելով, որ լեզուն բոլորի համար լինի պարզ, հստակ, ընկալելի և մատչելի: Թարգմանության ընթացքում հարկ է համարել թվով 50 ծանոթագրություն ավելացնել՝ լուսաբանելու կամ ամբողջ ջացնելու պատմական որևէ եղելություն: Նկատի առնելով գրքի ծավալը՝ անհրաժեշտ է համարել այն երկու հատորի բաժանել՝ առանց ընդհատելու էջահամարների կարգը: Երկրորդ հատորի վերջում ավելացրել է անձերի, վայրերի և հատուկ անունների երկու ցանկ:

⁹ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի տպարանի և այնտեղ 1833-1996 թթ. տպագրված հայերեն գրքերի ցանկը տե՛ս Անահիտ Մուրադյան, Հայկական տպագրությունը Երուսաղեմում (19-21-րդ դարերում), Երևան, 2010, էջ 128:

¹⁰ Գրքի տիտղոսաթերթին գրված է՝ «Ազգային մեծանուն բարերար հանգուցեալ Պողոս Փաշա Նուպար կանգնեց գրական այս կոթողը Հայկական Սիոնի վրայ» (տե՛ս Տ. Սավալանյան, Պատմություն Երուսաղեմի, գրաբար բնագրից աշխարհաբարի վերածեց Մեսրոպ եպս. Նշանյանը, Երուսաղեմ, 1931, հ. Ա.-Բ., էջ 1387):

¹¹ Տե՛ս Տ. Սավալանյան, Պատմություն Երուսաղեմի, Երուսաղեմ, 1931, հ. Ա.-Բ., էջ 9:

Տիգրան Սավալանյանն իր գրքում՝ հավելվածի երկու հատվածում ներկայացրել է Սուրբ Աթոռում գտնվող կարևոր արձանագրությունների և հանգուցյալ պատրիարքների տապանագրերի 70 ընդօրինակություն: Իսկ թարգմանիչ Մեսրոպ Նշանյանը, ձգտելով կազմել ամբողջական հավաքածու, ավելացրել է 586 արձանագրություն և տապանագիր, որով արձանագրությունների ընդհանուր թիվը հասել է 656-ի: Ծեփերի տակ ծածկված արձանագրությունները երևան հանելու և հողի տակ թաղված բազմաթիվ տապանաքարերը կարդալու հարցում Մեսրոպ արք. Նշանյանին օգնել են մի շարք միաբաններ, հատկապես՝ Մուշեղ Հայրապետյան և Շավարշ Գույումճյան վարդապետները, որոնց թարգմանիչը երախտագիտություն է հայտնում¹²: Գրքի աշխարհաբար թարգմանությունը մամուլում բարձր է գնահատվել¹³:

1939 թ. Մեսրոպ արք. Նշանյանն ընտրվում է Երուսաղեմի Սուրբ Աթոռի պատրիարք (1939-1944 թթ.)¹⁴: Մեսրոպ արք. Նշանյանը տասնյակ տարիների անդուլ աշխատանքով անսահման անձնվիրություն և հավատարմություն է ցուցաբերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, խոնարհությամբ ծառայել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին, որտեղ անց է կացրել իր հովվական կյանքի մեծ մասը¹⁵:

¹² Տե՛ս անդ. էջ 12-13:

¹³ Տե՛ս Ն. Ակինյանի գրախոսականը այս գրքի աշխարհաբար թարգմանության մասին. «Հանդէս ամսօրեայ», 1934, թ. Ա.-Բ., էջ 93-94:

¹⁴ Մեսրոպ արքեպ. Նշանյանի՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տպարանում տարբեր տարիներին հրատարակված բոլոր երկերի ցանկը տե՛ս «Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833-1996 թթ.)», կազմ.՝ Ա. Մուրադյան, Երևան, 2011, էջ 148:

¹⁵ Տե՛ս «Տ. Մեսրոպ արքեպ. Նշանյան», խմբագրական. «Էջմիածին», 1944, հուլիս-օգոստոս-սեպտեմբեր, էջ 11-13:

Ա. Մուրադյան

**Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյան
Անփոփում**

Երուսաղեմը հայ հոգևոր մշակութային կյանքի հայտնի կենտրոններից մեկն է հայկական սփյուռքում: Այնտեղ 1832 թ. Հիմնվել է հայկական տպարան, որն առ այսօր շարունակում է հրատարակել հայերեն և օտարալեզու արժեքավոր գրականություն: Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանը Հայ Երուսաղեմի նշանավոր գործիչներից է, որը մեծապես նպաստել է տպարանի հաստատմանը և գործին:

А. Мурадян

**Месроп архиепископ Ншанян
Резюме**

Иерусалим является одним из известных центров армянской духовно-культурной жизни. В 1832 г. Там была основана армянская типография, которая до сих пор продолжает издавать книги на армянском и иностранных языках. Один из видных Армянских деятелей Иерусалима Месроп архиепископ Ншанян, который главным образом способствовал основанию издательства.

A. Mouradyan

**Mesrop archbishop Nshanyan
Summary**

Jerusalem is one of the notable centers of the Armenian spiritual cultural life in Diaspora. In 1832 an Armenian printing house was founded there which has been publishing Armenian and foreign valuable literature up today. Mesrop archbishop Nshanyan, one of the prominent Armenian figures of Jerusalem has greatly assisted to the foundation and the activity of that publishing house.